ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի 29/11/2016թ թիվ 47-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

_____ Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում
«02» դեկտեմբերի 2016թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-047

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԲՈՆՈՒՍ-ՄԱԼՈՒՍ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԵԿԱՆԳԱՄՅԱ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ)

ԵՐԵՎԱՆ- 2016

1. Սույն կանոնների ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ (այսուհետ՝ Բյուրո) կանոնների համաձայն հաշվարկված Բոնուս-Մալուս դասերը սույն կանոնների ուժի մեջ մտնելու օրը սույն կանոնների ուժով հետևյալ պահանջներին բավարարող ապահովադիրների համար նվազեցվում են 4 դասով, բայց ոչ պակաս, քան բազիսային Բոնուս-Մալուս դասը.

1) տվյալ ապահովադիրն 2016 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ ունի (ունեցել է) կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագիր, որում որպես օգտագործման նպատակ նշված է «հանրային տրանսպորտ» կամ «տաքսի»,

2) տվյալ ապահովադրի կողմից կնքված և 2016 թվականի օգոստոսի 31-ին գործողության մեջ եղած ԱՊՊԱ պայմանագրով (պայմանագրերով) ապահովագրված է եղել մեկից ավելի ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունը:

2. Բյուրոն իր անդամ ապահովագրական ընկերություններին տրամադրում է սույն կանոնների 1-ին կետով սահմանված պահանջներին բավարարող ապահովադիրների ցանկը (այսուհետ՝ Ցանկ), ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունները և լրացումները:

3. Մինչև սույն կանոնների 1-ին կետով նախատեսված նվազեցումն ավտոմատ իրականացնող տեխնիկածրագրային փոփոխությունների ներդրումը Ցանկում ներառված ապահովադիրների համար սույն կանոններով նախատեսված արտոնություններն ապահովագրական ընկերությունները հաշվարկում են ինքնուրույն՝ ԱՊՊԱ միասնական տեղեկատվական համակարգից ստացված Բունուս-Մալուս դասը նվազեցնելով 4 դասով, բայց ոչ պակաս, քան բազիսային Բոնուս-Մալուս դասը և նվազեցված դասերն արտացոլելով վերջինների հետ կնքվող ԱՊՊԱ պայմանագրերում: Սույն կանոնների 1-ին կետով նախատեսված նվազեցումն ավտոմատ իրականացնող տեխնիկածրագրային փոփոխությունների ներդրման պահից (ինչի մասին Բյուրոյի գործադիր տնօրենը գրավոր իրազեկում է Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերություններին) ԱՊՊԱ պայմանագրում պետք է արտացոլվեն ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից ստացված Բունուս-Մալուս դասերն՝ առանց որևէ ինքնուրույն նվազեցումների իրականացման:

4. Մինչև սույն կանոնների 1-ին կետով նախատեսված նվազեցումն ավտոմատ իրականացնող տեխնիկածրագրային փոփոխությունների ներդրումը Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների կողմից Ցանկում ներառված անձանց հետ ԱՊՊԱ պայմանագրեր կնքելիս սույն կանոններով նախատեսված կարգով և արտոնության չափով Տեղեկատվական համակարգից ստացված Բոնուս-Մալուս դասի ինքնուրույնաբար նվազեցումը և դրա ԱՊՊԱ պայմանագրում արտացոլումը չի դիտարկվում որպես Բյուրոյի համապատասխան կանոնների խախտում: